ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ

21 օգոստոս 2025թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 08/10
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Դավիթ Սարգսյանը, Զարինե Ղամբարյանը, Հասմիկ Վարդանյանը, Թաթուլ Գուլինյանը, Նարեկ Ալիխանյանը, Սուրեն Մելիքյանը, Վարդան Ավագյանը, Արմենուհի Մաիլյանը, Արա Մարտիրոսյանը, Սարգիս Սահակյանը

<u>Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝</u>
Արփի Թամրազյան, Աշխեն Ամիրխանյան, Ադամ Սարգսյան, Հովհաննես Նաղդալյան, Գարունիկ Վարդանյան, Լիլիթ Պողոսյան, Վարդան Մկրտչյան, Լիպարիտ Սանթրոսյան

<u>Նիստը վարում էր Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Արման Բազինյանը</u>

<u>Նիստը արձանագրում էր ՝ Սոնա Եգանյանը</u>

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԱՆ ԲԱԶԻՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2025 թվականի տեղական բյուջեի վարչական մասում փոփոխություն կատարելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
2. «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքում բազմաֆունկցիոնալ խաղադաշտի կառուցում» ծրագրին հավանություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
3. ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի ներհամայնքային նշանակության ճանապարհների փոսային նորոգման և ասֆալտապատման աշխատանքների և վարչական բյուջեի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
4. Դիլիջանի համայնքային ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թեկնածություններին համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 959-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՐՄԱՆ ԲԱԶԻՆՅԱՆ)

Համաձայն ՀՀ կառավարության 27.12.2024թ. թիվ 2060-Ն որոշման, Դիլիջան համայնքի և Տավուշի մարզպետի աշխատակազմի միջև 26.02.2025թ. կնքված թիվ ԴՄ-ԴԵԴ-2025 պայմանագրի հիման վրա ս/թ. հունիսի 25-ին կնքվել է համաձայնագիր, ըստ որի Դիլիջան համայնքին հատկացվել է 1 741 100 (մեկ միլիոն յոթ հարյուր քառասունմեկ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ՝ արտադպրոցական հաստատություններում դասավանդող մանկավարժական աշխատողների կամավոր ատեստավորման արդյունքում ատեստավորված մանկավարժներին լրավճար վճարելու նպատակով: Ելնելով վերոգրյալից անհրաժեշտ է վերը նշված գումարը ճանաչել եկամուտ և ծախս:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33 -րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով, Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքին հատկացված 1 741 100 (մեկ միլիոն յոթ հարյուր քառասունմեկ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ գումարը ճանաչել որպես եկամուտ:

2. ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքին հատկացված 1 741 100 (մեկ միլիոն յոթ հարյուր քառասունմեկ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ գումարը ճանաչել ծախս՝ «09-05-01» Դիլիջան համայնք /Արտադպրոցական դաստիարակություն/ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման նախահաշվի՝ 4729 /Այլ նպաստներ բյուջեից/ հոդվածով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 960-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

«ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԽԱՂԱԴԱՇՏԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԱՆ ԲԱԶԻՆՅԱՆ)

Դիլիջան համայնքի ղեկավարը նշեց, որ Սլովակիայի Հանրապետության Պովաժսկա Բիստրիցա քաղաքի իշխանության կողմից ներկայացվել է առաջարկություն «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքում բազմաֆունկցիոնալ խաղադաշտի կառուցում» ծրագրի իրականացման նպատակով հանդես գալու որպես համաֆինասավորման կողմ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ և 42-րդ կետերի պահանջներով՝ Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն Դիլիջան համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել 2025 թվականին իրականացնել «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքում բազմաֆունկցիոնալ խաղադաշտի կառուցում» ծրագիրը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 961-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՓՈՍԱՅԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԱՆ ԲԱԶԻՆՅԱՆ)

Կատարված ուսումնասիրություններից պարզվել է, որ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի ներհամայնքային նշանակության ճանապարհների որոշ հատվածներում առաջացել են ջրափոսեր, որոնք ճանապարհները դարձնում են դժվարանցանելի, մասնավորապես՝ Սայաթ-Նովայի, Խ.Վաթինյանի, Խ.Հակոբջանյանի, 26 Կոմիսարների, Խորհուրդների, Անդրանիկի, Մոլդովական, Իվանովոյի փողոցները, Կալինինի փողոցի 1-ին նրբանցքը և Կալինինի փողոցի թիվ 185 բազմաբնակարան բնակելի շենքի բակային հատվածը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 42-րդ կետերի, 90-րդ հոդվածի 6-րդ մասի և «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով ՝ Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ հավանություն Սայաթ-Նովայի, Խ.Վաթինյանի, Խ.Հակոբջանյանի, 26 Կոմիսարների, Խորհուրդների, Անդրանիկի, Մոլդովական, Իվանովոյի փողոցների, Կալինինի փողոցի 1-ին նրբանցքի ճանապարհների փոսային նորոգման աշխատանքների և Կալինինի փողոցի թիվ 185 բազմաբնակարան բնակելի շենքի բակային հատվածի նորոգման իրականացմանը:

2.Դիլիջան համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից՝ 11-01-02, «ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի «4891» (պահուստային միջոցներ) տնտեսագիտական հոդվածից 40 000 000 /քառասուն միլիոն/ ՀՀ դրամ հատկացնել «04-05-01» Դիլիջան համայնք /Ճանապարհային տրանսպորտ/ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 4251 /Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում/ տնտեսագիտական հոդվածին:

3. Համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով պատվիրել նախագծանախահաշվային փաստաթղթերը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 962-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԱՆ ԲԱԶԻՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 16-րդ կետի պահանջներով, հիմք

ընդունելով 19.08.2025 թվականի մրցութային հանձնաժողովների եզրակացությունները՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն Սասուն Սեյրանի Ղամբարյանին Դիլիջանի համայնքային ենթակայության «Դիլիջանի մարզահամալիր» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն նշանակելու մասին Դիլիջանի համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2.Տալ համաձայնություն Էլլա Էլֆիկի Եսայանին Դիլիջանի համայնքային ենթակայության «Դիլիջանի մանկական երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն նշանակելու մասին Դիլիջանի համայնքի ղեկավարի առաջարկությանը:

3.Տալ համաձայնություն Հասմիկ Հերմիկի Թադևոսյանին Դիլիջանի համայնքային ենթակայության «Դիլիջանի թիվ 1 մակապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն նշանակելու մասին Դիլիջանի համայնքի ղեկավարի առաջարկությանը:

4. Տալ համաձայնություն Հայկ Թելմանի Մնացականյանին Դիլիջանի համայնքային ենթակայության «Դիլիջան համայնքի կոմունալ սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակելու մասին Դիլիջանի համայնքի ղեկավարի առաջարկությանը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 963-Ա)*

Ավագանու անդամներ

ԱՐՄԱՆ ԲԱՋԻՆՅԱՆ

ՔՐԻՍՏԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ՌՈԲԵՐՏ ԱԼԻԽԱՆՅԱՆ

ԱՐՇԱԿ ԽԵՄՉՅԱՆ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՔՐԻՍՏԻՆԵ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ԹԱԼԱՆՉՅԱՆ

ԱՐՏԱԿ ԲՈՋԻԿՅԱՆ

ՆՈՒՆԵ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՇՈՒՇԱՆԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

ԱՐՄԱՆ ԲԱԶԻՆՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Սոնա Եգանյանը

_____